

ՄԱՅԿ

Հարկան գինը 10 բուրլ, կես տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Դեր հասցէն. Тифлис. Редакция «Мшак».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը ըստ է առաւօտեան 10—2 ժամ
(Յայտ կիրակի և առաւօրեայ):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանչիւր ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մի պատասխան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համակ Պարկատանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մանչեսթրի աշխարհահանդէսը.

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Ընթերցողը յիշում է, երևի, մեր այն տառնորդող յօդուածները («Մշակ» №№ 102 և 103), որտեղ մենք այն միտքն էինք յայտնում թէ երբ որ մի մարդ կասկածված է մի քրէական յանցանքում, հասարակական կարծիքը և մամուլը պէտք է զգուշանան յանցաւորի մասին որ և է կարծիք յայտնելուց, մինչև որ գործը դեռ ևս քննիչի ձեռքումն է, քանի որ դատաստանական քննութիւնը թէ օրէնքով և թէ ամենատարրական լօգիկայի հիման վրա պէտք է զաղտնի կատարվի և հարկաւոր չէ որ և է ձեռնում գործել դատաստանական քննութեան վրա: Մամուլը և հասարակաց կարծիքը միջոց էլ չունեն որ և է ստոյգ անդեկութիւն ունենայ քրէական գործի մասին, մինչև որ գործը դեռ ևս քննիչի ձեռքումն է և չէ անցել հրապարակական դատարանի դահլիճը: Արդէն այն իրողութիւնը, որ պատրաստական զաղտնի դատաստանական քննութիւնից յետոյ, գործը անցնում է դատարանը, որի դռները բաց են ամենքի համար, որի վիճաբանութիւնները հրապարակական են, մասնաւորացի է անում օրէնսդրութեան այն տրամադրութեան վրա, որ միայն այն բան պէից, երբ քրէական գործը քննիչի ձեռքից կատարեալապէս և վերջնականապէս ձեւակերպված անցնում է դատարանի դահլիճը, գործի հետ հասարակական կարծիքին ծա-

նօթանալը և մամուլին նրա մասին խօսելը մատչելի և թոյլատրելի է դառնում: Բայց մենք երբեք չենք ասել որ քրէական, դատաստանական գործի մասին խօսելը թոյլ է տրվում մամուլին միմիայն այն ժամանակ, երբ դատարանը արդէն իր վերջնական որոշում է կայացրել՝ դատապարտել կամ արդարացրել է մեղադրվածին:

Ահա, ինչ էինք ասում մենք «Մշակի» № 102-ի մէջ, որպէս ձեւակերպութիւն նոյն յօդուածում յայտնված մտքերի: «Հասարակաց կարծիքը և մամուլը պէտք է զգուշանան իրանց կողմից որ և է ձեռնում գործելուց դատապարտութեան ընթացքի վրա: Ընդհանրապէս հարածել հասարակութեան պակասութիւնները մեր պարտքն է,—բայց մի յանցանքի մէջ կասկածված անհատի վրա նշանակված դատաստանական քննութիւնը դեռ չէ վերջացրած՝ ոչ հասարակաց կարծիքը, ոչ էլ մամուլը իրաւունք չունեն իրանց միտքը յայտնելով ներգործել դատապարտութեան այս կամ այն ընթացքի վրա:»

Եւ «Մշակի» հետեւեալ, № 103-ի մէջ, այդ յօդուածի շարունակութեան մէջ, մենք ասելուց անցնում էինք. «Հասարակաց և մամուլի նախնական դատաստանական քննութեան ամեն դրսի ներգործութիւնից անմատչելի, ամեն միջամտութիւնից անբաժանելի լինելու անհրաժեշտութիւնը,—պէտք է զգուշանանք մի որ և է միտք, կարծիք յայտնելուց այս կամ այն քրէական գործի մասին, նրան այս կամ այն կերպ քննադատելուց, մինչև որ գործը դատաստանական քննիչի ձեռքից, կատարեալապէս և վերջնական կերպով ձեւակերպված անցնի դատաստանական դահլիճը, որի դռները բաց են ամենքի համար, որի հրապարակական վիճաբանութիւնները արդէն մատչելի են դառնում հասարակաց կարծիքին:»

Այդ մեր կարծիքներին պ. Նիկոլաձէ պատասխանեց մեզ «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրում, մի բանասիրական յօդուածով: Բայց ի՞նչպէս պատասխանեց...

Մենք հեռու ենք ընդունելուց որ պ. Նիկոլաձէ գիտմամբ ուրիշ զոյն է տուել մեր յայտնած մտքերին, այլ հաւատացած ենք որ «НОВ. ОБОЗР.» լրագրի խմբագրատանը հայերէն ոչ մի իմացող աշխատակից չը գտնվելով, պ. Նիկոլաձէին սխալ կերպով են թարգմանել մեր ասածները:

Մենք ասել ենք որ չը պէտք է խօսել քրէական յանցանքում կասկածվածի մասին, մինչև որ գործը դեռ ևս քննիչի ձեռքումն է և չէ անցել հրապարակական դատարանը, իսկ պ. Նիկոլաձէ հաւատացնում է իր ընթերցողներին որ մենք ասել ենք, թէ մամուլը իրաւունք չունի մեղադրվածի մասին խօսել, մինչև որ դատարանը չը կայացնի մեղադրվածի մասին իր վերջնական, անձինջ կերպով վճռող որոշումը...

«НОВОЕ ОБОЗР.» լրագրի սեպտեմբերի 26-ի համարի մէջ տպված պ. Նիկոլաձէի բանասիրական սկսվում է հետեւեալ խօսքերով:

«Իմ ֆելիետոնը պ. խօսքովի մասին զգաւորութիւն ունեցաւ հաճելի չը լինել պատուելի «Մշակ» հայոց լրագրին: Իօկատոր Արծրունու օրացի հարկաւոր համարեց կարգալ «НОВ. ОБОЗР.» լրագրի գլխին մի խիստ յանդիմանութիւն թէ անտեղի է մամուլի կողմից ոտք կոխել դատաստանական գործերի շրջանում, մինչև որ սահմանված իշխանութեան կողմից արտասանված չը լինի վերջնական որոշումը, որը անձինջ կերպով է վճռում թէ ո՞ր կողմն է արդարութիւնը և ո՞ր կողմն մեղաւորութիւնը:»

Եւ ահա այդ սխալ կերպով թարգմանված խօսքերի հիման վրա, յօդուածագիրը

երկար բանասիրական է գրում, բացատրելով թէ մամուլը իրաւունք ունի քննադատել դատաստանական գործը, յայտնել գործի մասին իր կարծիքը դատարանի կողմից վերջնական վճռի կայացնելուց առաջ էլ...

Ուրեմն եթէ մեր թէպիսը սխալ կերպով թարգմանված չը լինէր, պ. Նիկոլաձէ աւելի էլ չէր ունենայ իր երկար յօդուածը հեղինակելու և իր ընթերցողներին ստիպված լինելու տարրական մտքեր յայտնել,—քանի որ նրա ասածները մեր ասածների կրկնութիւններ են:

Վերցնել մի հակառակորդի խօսքը կատարելապէս աղաւաղած ձեւով,—և այդ աղաւաղած խօսքերի հիման վրա հերքել չեղած թէպիսը, վիճաբանել, բացատրել, բանակուել... Բայց ո՞ւմ դէմ,—մի երեւակայական հակառակորդի դէմ, կամ աւելի լաւ է ասել այն թարգմանչի դէմ, որը մենք հաւատացած ենք ի հարկէ, անգիտակցաբար և հայոց լեզուի մէջ իր տղի-սուրբեան պատճառով սխալ կերպով է թարգմանել մեր ասածները,—ահա պ. Նիկոլաձէի արածը...

Մենք եթէ գրեցինք մեր վերոյիշեալ առաջնորդող յօդուածները, այդ այն պատճառով էր, որ պ. Նիկոլաձէ իր առաջին յօդուածում շոյափում էր խօսքովի գործը մինչև որ այդ գործը դեռ ևս քննիչի ձեռքումն էր գտնվում, և դեռ չէր անցել (մինչև հիմա էլ չէ անցել) հրապարակական դատարանը:

Բայց նայեցէ ինչ է ասում պ. Նիկոլաձէ իր երկրորդ յօդուածում, մեր ասածները աղաւաղած կերպով ներկայացնելուց յետոյ:

«Ես ասում եմ միայն, որ մամուլը ունի իրաւունք խօսել դատաստանական գործերի մասին,—ոչ թէ նախնական քննութեան այլ դատաստանական գործերի մասին,—ունի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՉԵՏՐԻ ԱՇԽԱՐՀԱՆԴԵՍԻՍ

Այս յօդուածի սկզբում յիշելով թէ ֆոտոգրաֆիական արհեստը մտղիված է քիմիական բաժնի մէջ, Արիստի «daguerreotype»-ից այս արհեստը ցայսօր է իր տաղանդիւնութեան իւրաքանչիւր պարբերութիւնը քայլ առ քայլ: Այստեղ Պլատոնատիկ և Ուոլթերիտիպ տպագրական գործողութիւնները, բրոմիդան թղթերի վրա տպագրական ինչպէս և խոշորացման ամենամոր գործողութիւնների հետ ծանօթանալ կարելի է շատ հեշտ և գործնական կերպով: Եւ յիշելով Աւստրիայ ընկերութեան գործերն ամենից զլուսաւոր տեղն են բռնում հանդիսի այս բաժնում, որից յետոյ կարելի են մեքենայական շուրջով պատրաստված կրկնի ֆոտոգրաֆները:

Գործութիւններով հարուստ է մանաւանդ քիմիական և քիմիայի հետ կապ ունեցող արհեստների բաժնում: Բայց առանց քիմիայի հետ կապաւորած ծանօթութիւն ունեցող ընթերցողին անկարելի կը լինէր հետեւել մեզ եթէ սկսէինք թելադրել զիւրաքանչիւր արհեստը, որոնք կազմում են մեր դարի ամենազարգացած պարբերութիւնը: Քիմիկո-ֆիզիկական գործիքների մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի է պ. Լօվլիօնի ինքնաշար գոյնաչափը («Tintometer») անուանվող այս գործիքի միջոցով կարելի է չափել հեղուկների, ինչպէս և կարծր մարմինների գոյնի թանձրութիւնը մեծ ճշգրտութեամբ և այսպիսով (առաջին անգամ) բաժանել մարմինները գոյնի տարբերութեան համեմատ: Մանչեսթրի համալսարանը գրկած է քիմիական շատ հազուադէպ նիւթեր ինչպէս և ձեւագրեր, որոնց մէջ են հիւլեական թէօրիայի հաստատող

հոգաւոր Գոլթերի ձեռագիր աշխատութիւնները: Մասնաւոր աշխատանք կարող է այստեղ սրտի ուղեղին չափ տեսնել ու սովորել, քանի որ ոչինչ պակաս է քիմիական այս հազուադէպ թանգարանից: Գոլթեր, Ներկեր, աղբի, թթուներ, ալկալոիդներ և այլն չարված են ահադէն քանակութեամբ: Այստեղ խիստ զրաւի են մանաւանդ պաղլիկի հակապակաս բերեղիները, որոնք բարձրութիւնն է 13 ֆուտ և դրամագիծն 6 ֆուտ: Բիւրեղացման ժամանակ դոյացած տառաքանիները ներքից հրապարակ են այցելուին երազել Մօնտի Բիւրստի բանաստեղծական քաւանքային և ֆարիայի միլիօններէից. բայց Կուրի ջրի հետ ծանօթ այցելու աւելի նախանձ աչքով նայում է դիզված «aluminoferrite»-ներին և «al-fersil»-ներին վրա, որոնց յատուկ գործածութիւնն է գումաւոր և անզոյն կեղտեր պարունակող ջրեր մաքրելու համար: Այս բաժնում ենք պարտնակում է նաև տաղանդաւորութեան մեծ առաջադիմութիւնը ներկայացնող Նիւթեր: Սրանք այնպէս անզուարթված են, որ մէկ հայեացքով կարելի է ծանօթանալ սաղոնի պատմութեան, քիմիապիտութեան և արտադրման հետ:

Երաժշտութեան համար բացված է մի առանձին մաս, ուր պահվում են բոլոր հուշակաւոր երաժիշտների ձեւագիր աշխատութիւնները և այլն: Սրանց մէջ է Հինգելի «Մեոսան», Բեթհովենի հոգաւոր պիանոն, որը երաժշտի տառաքանի անզուարթված են, որ մէկ հայեացքով կարելի է ծանօթանալ սաղոնի պատմութեան, քիմիապիտութեան և արտադրման հետ:

Թանգարանի քարերի թւում կան ունդարական, արարական, հնդկական օրինակներ հաղարարութեան, որոնցից շատերը ունեն անուանակալ արժէք և գրկված են համալսարաններից ու մասնաւոր կրթութեանից: Այս հարստութեան շարունակ զիջողութիւնը կրկնապատկւում համար տարբեր զիջողութեան հետ: չինված են եւրոպական ամենաբարձր ճաշակով զարդարված սենյակներ, ո-

րոնք ներկայացնում են զուտ զաղափարական մարդկային բնակարաններ իրանց մաքրութեամբ, ճոխութեամբ և երկրային առատ բարեկեցութեամբ: Անցնելով կուսակազմութեան, մոնաղորդութեան, ալկալիգործութեան և ոսկերչութեան վրայով, որոնք կազմում են նորութիւնների մի ուղիւնստ, պէտք է կանգնել գեղարուեստների փառաւոր դալիքէ-յում, որը լուսաւորվում է էլէկտրական լոյսով: Այս դալիքէյում գաղափար լոյս չը գործածելու պատճառն է ցուրտ օդ ունենալու անհրաժեշտ պէտքը, քանի որ տաքութիւնից այրվում են պատկերները և գաղի պարունակած ծծմբային գոլորշիքը փչացնում են չրջանակները: Բացի այս պատկերասանութիւն մէջ առհասարակ նախադասելի է սպիտակ լոյսը: Դեռ ապրող նկարիչների գործերը բաժանված են մարմնով մեռած, թէ չէ գործերով կենդանի, նկարիչների աշխատութիւններէից: Խաղաղութեան և թէ ջրաներկ նկարների հետ կապված են Միլլիայի ամենաբարձր արհեստագիտների անունները, ինչպէս և Ուոլթեր Միլլիայ, Թրեյնը, Լէզլի և այլն: Բայց պէտք է նկատել որ երկրաստոր ալպոյնիկները գործերից շատերը ստուեր են դրոմ տիեզերական հուշակ վայելող հին դպրոցի «chef-d'oeuvre»-ների վրա: Թէ է դժուար է այս մեղադրանքների ժողովածուից գոլել մէկը առանց մեղադրելու միւսի դէմ, այսու ամենայնիւ ներքին կը լինի մեզ մէջ: Եւ ինչպէս մենք ասել ենք Ուոլթերի «Սէր և Մա», «Սէր և Կեանք», «Մահաւան Հրեշտակ», «Միլլիայի» «Գերիների Դուկայ», Մարքի «Ornithologist», Օրիորդ Թոմսոնի «Balacava» և այլն: Հարկաւոր չէ ասել թէ մի օրվայ մէջ անկարելի է տեսնել այս ժողովածուն ամբողջովին: «Մա»-ի ներկայ թղթակիցը նուիրած է հինգ օր մի-միմիայն իւրաների և ջրաներկ նկարների հետ ծանօթանալու համար և իրաքանչիւր օր ստիպվել է յիշել Saint Germain-ի լայնադանութիւնը՝ «Quel délicieux spectacle pour un observateur!»

Աշխարհահանդիսի կարգաւորութեանը հետեւելով հարկ էր մեքենաբանական մասի վրա այստեղ միայն խօսել, չը նայելով որ դա իսկապէս կազմում է ամբողջ հանդիսի հոգին, եթէ մնացեալները համարենք մարմին: Այդ ծանօթ կամրջից իջնելով, այցելու պատահում է մի բոլորովին եզակի տեսարանի: Գաղով բանող հորիզոնական մեքենաներ չարժան մէջ են ամբողջ օր, ինչպէս և նաև չիքի հուշակաւոր մեքենաները, որոնք բանում են շողովով: Սէր Ուոլթերի, որ առաջին գործնական մեքենագէտն էր աշխարհիս վրա և որի անունը պէտք է մնայ կենդանի, մեքենական աշխարհի մէջ իր արած մեծամեծ գիւտերի շնորհ, ամեն ջանք թափած էր Մանչեսթրի հանդիսում էլ փայլեցնել իր առատ տաղանդի արդիւնքը, սակայն դեռ չը լրացրած այս վերջին նպատակը, կիքից իր մահկանացուն ի խոր սուղ համակելով իր համալսարանական սաների մեծ շտաբը: Չը նայելով այս չարապատեհ հանգամանքին, Սէր Ուոլթերի կիքը յաջողած է այնպիսի կերպարանք տալ իր ամուսնու գործաբանից եղած աւարականներին, որ կրկին Ուոլթերի թիւն անունը այսօր տիրում է աշխարհահանդիսի վրա: Չը գիտնէր ինչու Սէր Ուոլթերի գիւտերի թւում չէր ներկայացնված մեծամեծ մեքենա-դէտի հնարած այն մեքենան, սրով այսօր կարողանում ենք զգալ կերպով չափել անդլիական մէկ դրոյի տառն հազարորդական մասը, թէ և այս սրվասը ծածկված է պատկերաւորական նաւակի համար պատրաստված իր ահապին թնդա-նօթիքով, որոնք երեւալ բնաւ չէինք սպասում: Երեւել է Մադըր Լնդ Փլաթթի կուսակալ մեքենան, որը միանգամից տպում է տառն զանազան դրոյներով և յորացնում մի և նոյն ժամանակ: Այս ֆիրման առաջին անգամ երևան է հանած մի լանձող մեքենայ, որով սրբվում է մագոս գործուածքների երկու: Մեքենայի լանձող մասը տաքացնվում է մի դիմաօթի: Երկարական հոսանքով և չարժվում է կլանների վրա՝ Ներկայ է

իրաւունք քննարկելու այդ գործերը իր սեփական տեսակէտից:» (Я говорю только то, что печатать имѣетъ право говорить о судебныхъ дѣлахъ, — не о судебныхъ, а о судебныхъ, — имѣетъ право обсуждать эти дѣла съ своей собственной точки зрѣнія).

Մենք հօ՛ւ նոյնն էինք ստում: Ուրեմն ո՞ւմ դէմ է վիճում պ. Նիկողայեւ... Հաւանական է որ իրան դէմ, որովհետեւ գրական փոքր ինչ առաջ, նոյն «Нов. Обозр.» լրագրի մի այլ բանասիրականում, որ և առիթ տուցեց մեր առաջնորդողներին, նա հակառակ իր այժմեան ասածներին, իրաւունք էր համարում իրան, որպէս մամուլի ներկայացուցչի, խօսել կաշառակարգած թարգմանի մասին, մինչև որ այդ մարդու գործը զանկում էր դեռ ևս քննիչի, և ոչ թէ դատարանի ձեռքում:

Տարօրինակ լոգիկա...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հարուր գաւառի ԽԱՆԳԱՐ գիւղից մեկ զբոսում են: Անցնելով օր խանութներից, գիւղացիք մի-ուրիցի գերեզմանատնից մերադառնալու միջոցին՝ հարեան մի գիւղի թուրք գիւղացիներից մէկը հրացան է արձակում հայերի խմբի դէմ և գնդակի կոտորակներով դիպում է մի հայ աղջկայ գլխին, ծանր կերպով վիրաւորելով նրան: Զարագործը անմիջապէս փախչում է: Յայտնենք որ մեր գաւառացի աղ. Բէժմանքէօվ եւանդաբան միջոցներ գործ կը դնի չարագործին բռնելու համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՅ Հեռագրում են Հիւսիսային դորձակալութեան, որ մարային տուրքերի գէպարտմէնտի չըբարեկամում, սկստմանը 25-ից, թղթաւորված է ընդունել մարային վճարքի տեղ կալուածական փոխադարձ կրեդիտի ընկերութեան 1/2 որոշմանուն մետաղական զբաւական թերթերի կուպոններ, կամ նոյն իսկ գրաւական թերթերը, որոնք հանված են արաւականում:

«Новое Время» լրագիրը, ինչպէս հեռագրում

նաև ծանր մթերք փոխադրելու համար շինված էլեբարական մի նոր կառու, որից յետոյ կարգով գալիս են՝ չաքար չորացնելու համար շինված ջրհան և կենտրոնական մեքենաներ, էլեբարական մեքենաներ, Թանգէի մեծամեծ ջրհաններ և այլն: Երկրորդ շարքում են բամբակը սերմից բաժանող մեքենաներ, որոնց մեծ ծառայութիւնն հասկանալի է նրանց միայն, որոնք դիտեն թէ հաւաքներում ինչպիսի չարագործներով էր կատարվում այս գործը, երբ մանաւանդ բամբակն էր Մադրասի, Պարսկաստանի և Վինաստանի տեսակներից: Այս մեքենաներից իւրաքանչիւրը յիսուս ժամկէտ մէջ մաքրում է 33000 (առասական) ֆունտ բամբակ: Յետոյ գալիս են նոր սխտանի մանուշակ, սանրելու, ոլորելու և հիւսելու մեքենաներ, որոնք այնչափ պարզ են, որ մի փոքրիկ աղջիկ կարողանում է կառավարել չորս հատ առանց շփոթվելու: Բարդ մանկու, գլխու և գործելու համար էլ կան առանձին մեքենաներ, որոնք ցուցնում են մեծ կատարելագործութիւններ: Չեն մուտքված նաև խմորեղէն և չաքարեղէն ուտելիք պատրաստելու ամենանոր գործիքները: Մանչեստրի ամենամեծ օրաթերթերից մէկը գրկած է ազգայնապա մի մեքենայ, որի նմանը հազիւ թէ կը գտնվի (Փայմսթի) գոտոյ տպարանում: Օրաթերթի ներկայացուցիչ մեքենայէտը մեր հարցերին պատասխանելուց յետոյ խնդրով նկատեց՝ «հասարակութիւնը տալիս է մեկ երկու հարիւր հազարից աւելի ընթերցող, մենք էլ դարձանք մեր ամբողջ երկու հարիւր հազարից աւելի օրինակներ տպող մեքենայով և մեր անխնայ խմբաբազրի աւօրեայ թարմ և անկողնապատ ընդհատութիւններով: Այս բառերից շարժված ունկնդիրների բուռն ծափահարութեան աղմուկը ընկղմեցան հարեան մարտի խաղաղութիւնը մեզի դիպի տակ և մենք դարձանք զէպի երրորդ շարքը:

Այս շարքի մէջ տեսնվում են գրչածայր պատ-

է մեզ Հիւսիսային դորձակալութիւնը, իսկ է, որ ֆինանսների միջնորդութեան մէջ կազմված է մի առանձին յանձնաժողով, որը բացել է արդէն իր նիստերը, և որի նպատակն է քննել լուցկիների արդիւնարեութիւնը հարկատուական ենթակարգի հարցը: Նոյն միջնորդութեան յատուկ յանձնաժողովները մշակում են կերտման և ստեղծման վրա հարկ դնելու հարցը: Նիւթարդութիւն կայ բարձրացնել արտասանմանից բերող աղի վրա դրված մարահարկը:

Պարսկաստանի Արդարիլ քաղաքից մեր տեսած մի մանուշակ նամակից բաղում ենք հետեւեալը: «Պարսկաստանում սովորութիւնն է մուհի-հասնէ մամին, երբ տոնվում է մահմետական մարգարէներին՝ Հուսէյնի և Հասանի նահատակութեան օրը, մանկը բանտրել և այդ օրվայ համար սղառակ բանտարկեալներին: Սկստմանը 16-ին Արդարիլ բանտից 5 հոգի բանտարկեալներ էին հանված: Բայց երբ վերջացաւ այդ օրը, բանտարկեալներից միայն միին կարողացան կրկին ընկնել և բանտ դնել, իսկ մնացած չորս յանցաւորները, որոնք մարդասպաններ և աւազակներ էին, փախչելով մասն քաղաքի մեկից: Իսկ մեկից մեկ պատասպանված մարդկանց հանել ու բանտարկել՝ մահմետականը յանցանք է համարում: Եւ ահա քանի մի օր է արդէն որ ոստիկանները չորս կողմը պաշարելով մեկից, հետեւից դիտում են թէ երբ չորս աւազակները, գուցէ սովից տանջվելով, դուրս կը դան մեկից: Իսկ, որպէս զի նորից ըստին այդ աւազակներին ու բանտարկեալներին նրանց»:

ԴԵՐԵՆԻՅԻՅ մեկ գրում են: «Այս օրերս մի լեռնաբանական լեզգի մանու է մի հայի խանութից քիթ ցնելու: Մուշաբուր և խանութպանի մէջ ինչ որ ասա կօպէկի համար վճ է ծագում և խանութպանը արշինով խիւղում է լեզգուն, իսկ այս վերջինս կատարելով հանում է դաշոյնը և խրում վաճառականի կողքը»:

Մեր ընթերցողները մտաբերում կը լինեն այն լուրը, որ Ռուսաստանի հարաւային նահանգներում բազմաթիւ հրէայ երիտասարդներ, հրեաներին համայնաբան մոտեցնելու առնաձայնակալութեան պատճառով, ընդունում են քրիստոնէութիւն և իրաւունք են խնդրում մանկ համալսարան, իրեն քրիստոնէական: Կիւիլի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն դիմել է ազգային լուսաւորութեան մի-րաստող և աշխարհագրական քարտեզներ տպող մեքենաներ և այլն, բոլորն էլ կատարելով իրանց յատուկ գործը: Յայտնի է թէ կաշուէ առասանի սուղ լինելուն պատճառով այժմ մեքենագործների նպատակն է գործելու փոխանցելու համար պատրաստել կանեփի այնպիսի լար, որ տոկուսն հանված ամենագործաւոր մեքենաների վրա գործածվող լարերից կարելի է տեսնել թէ որչափ յաւելո՞ւմ են այս նպատակի համար աշխատող անձինք: Շէշերի մէջ օգտագուն ջրիկ ներկակելու համար ցուցված են առաջնակարգ և միանգամայն նոր գործիքներ, որոնք իրանց արժանութեամբ խիստ օգտակար լինել են խոտատում: Նշանաւոր տեղ են ընտրում նաև հրդեհից և դողերից թանգալին իրեղէնները ապաստելու համար հնարված քանի, այժմ նորոգված և արտադրվողներ:

Զբոսաշխարհային մասունքների ստացած վերջին կատարելագործութիւնն իսկոյն դարձնում է դրանց հին կազմութեան հետ ծանօթ աչքին, մինչև ճնշման ենթարկված տեսակ տեսակ երկաթների մի հարուստ ժողովածու ներկայացնում է հետաքրքրութեան մի կենտրոն այն ուսանող ինժեներներին համար, որոնք նվաճական կարողութիւնից վեր է մուտք գտնել երկաթի թանգարաններում: Երկարագործական գործիքներից և մեքենաներից շատ քիչ քան պատկան է այստեղ և պողպատ պատրաստելու նորոգվում մի գործողութեան չը-նորհիւ, որը յայտնի է մեքենագործներին ինչպէս «basic process», երկարագործները կարող են տեսնել հոգ պարտադրանքի համար իրանց գործածած օգտակար կղզիները պողպատից ստացվելը: Պողպատի այս կղզիները մանրացվում է որպէս զի չուտով խառնել հոգի հետ և պարտադրողութեան մէջ պարզեցնելով 17% վտայութիւնը և 45% կիւր: Արդարեւ ուրիշ միջոցներով էլ կարելի է ստանալ այս խառնուրդը, սակայն ի նկատի առնելով երկու կողմի օգուտները, պէտք

նիստին հարցնելու թէ ինչպէս պէտք է հասկանալ հրէական ծագումը: Խօսքերը: Պ. մի-նիստի լազարութիւնից երեւում է, որ այն երկր-տասարգները, որոնք ընդունել են ուղղափառութիւն, պէտք է ընդունված լինեն համալսարանում:

Փոստերի և հեռագրիների զլիստուր վարչութիւնը ենթադրում է, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, զալ տարվանից բոլոր նահանգական քաղաքների և մայրաքաղաքների փոստատներում ընդունել փոխանակաբեր, մի քաղաքից միւր փող ուղարկելու համար: Այս միտքը վերին աստիճանի համակրելի է և դա արդէն վաղուց զլու է բերված այնման հարցաւորում:

Լրագիրները հաղորդում ին, որ Հաշի-կա-բուլի մօտ երկաթուղու գիծը փչանալու պատճառով, երեք վերստ տարածութեան վրա ժամա-նակաւոր գիծ է կառուցած և ամեն տեսակ զը-նայցներ անադղել կերպով երթնելու են:

Երկուշաբթի, սեպտեմբերի 28-ին թիֆլիսի քաղաքային դումայի կայացած նիստում վճարվում էր զալ 1888 թվականին թիֆլիսում գիւղատնտեսական ցուցահանդէս ունենալու հարցը: Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, այդ հարցը առաջին անգամ յարուցված էր Կովկասի Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Ընկերութիւնը մեծ համակրութեամբ վերաբերվելով հարցին և մշակելով ցուցահանդէսի ծրարքը, արդեւ դուռ միայն ներկական միջոցների սղութեան մէջ և այդ պատճառով վճարելով քաղաքի օգնութեան ինչպէս մտաբերում ենք, այդ ժամանակ քաղաքապետը 22 ձայնաւորների (ի միջի որոց և վարչութեան անդամներ) հետ մէկ նամակ էր գը-րել Գիւղատնտեսական ընկերութեան այն ժամա-նակալ նախագահ Գ. Խատիսեանին, որ նրանք համակրութեամբ են վերաբերվում թիֆլիսում ցուցահանդէս ունենալու մտքին և կաշառակարգելու հարցը դրամայում առաջ տանելու Գիւղատնտեսական ընկերութիւնը յոյս դնելով այդ խոտածան վրա, անցնալ աշնան ծրարի կազմից, և դիմեց քաղաքի օգնութեան: Փաղաքային վարչութիւնը մի ամբողջ տարի, չը դիտարկել ինչ պատճառներով, ձգձգելով գործը, միայն այժմ է այդ բանի մասին զեկու-ցում ներկայացնում դումային: Զեկուցման կազմած է մի յաւելում, որով քաղաքի մարդկի համար-կութեան պատճառով առաջարկվում է բացասա-

է անել թէ երկրագործի համար արժանութիւնը և պողպատ շինողի համար անօգուտ համարվող կղզիները վաճառվել երկաթի մի վառք է, որի համար կրկին պարտական ենք դիտութեանց մը-չակողներին:

Ինչպէս ամեն աշխարհահանդէսի մէջ, այնպէս էլ ներկայ հանդիսի չորեքաւորերի բաժնում, ա-րեգակի օդէս փայլում են Զարու-Սարուար և Բա-յեր-Ֆիլքս ընկերութեան անունները: Փրլի երկաթուղիների գործերի ընդհանուր կառավարիչ պ. Ուեբ ցուցած է երկու հազարապիս չորեքաւորեր, որոնցից մէկը շինված է 1803 թվականին և անցած պ. Ուեբի ձեռքը 1883-ին: Այս հին ֆուր-գոնը, որ 1829-ին ստացած է Լիւբլյուսկի և Մանչեստրի երկաթուղիաց Ընկերութիւնից 5000 րուբլի արցանակ, 19 վերստը մէկ ժամկէտ մէջ դնալու համար, այժմ նորոգված է բոլորովին և ներկայացնում է մի շատ աղքատ պատկեր իր ե-րիտասարդ քոյրերի գեղեցիկ շրջանում: Երկրորդն է չորեքաւորերի հայր Ռօբերթ Ստիվենսոնի մի «ռօբէյտ»-ը իր «թինգլերի» հետ միասին, որը նմա-նապէս 1829-ին արցած է Լիւ. և Ման. Ընկերու-թեան նուէրին համար: (Այստեղ թող ներուի մեզ յետագայ բարեկամական նկատողութիւնը: Ռուս ինժեներ տեխնոլոգիներից մէկը որ 1879-ին իր մի աշխատութեան երկրորդ հատարակութեան մէջ նախագահել էր Հարթմանի չորեքաւորերը, չը նայելով որ նոյն աշխատութեան առաջին սղա-դրութեան մէջ նկարագրված է Բայեր և Ֆիլքսի սխեման, լաւ կանխել է իր գլխի երրորդ կամ չորրորդ սղադրութեան մէջ նորից դիմել Բայեր և Ֆիլքսին):

Ստիվենսոնի մէջ մայնել կոնցերաներ, ներկայացումներ, կառավարական ընտրի խումբեր, սղա-ր, լուսավորութիւն և հատարական այլ և այլ գլուհոթութիւններ: Սրա նպատակն է նախ այցե-լուներ խուռն բազմութեան բաժանելը, որով

կան պատասխան տալ Գիւղատնտեսական ընկե-րութեան Բարեբաղդաբար դումայի կողմից այդ առաջարկութիւնը չընդունելից, եթէ ոչ մենք շատ ժամանակ պէտք է սպասէինք թիֆլիսում ցուցահանդէս տեսնելու: Չայնաւոր պ. Մ. Թաման-չեանի առաջարկութեանը ընտրվեցաւ մի մանա-ժողով, որ քննելով հարցը, զեկուցում պէտք է ներկայացնի դումային 1889 թվականին (1888 թվականի համար այժմ մտածել ուշ է), թիֆլի-սում ցուցահանդէս ունենալու հարցը: Մանաժո-ղովի անդամներ ընտրվեցան՝ պ.պ. Զօրջանէ, Մ. Թամանչեան, իշխ. Բէնդուլով, Նիկոլաձէ և Վէյ-ոէնհօֆ: Յանկանք, որ մանաժողովը աւելի լուրջ կերպով նայի հարցին, քան վարչութիւնը և աշ-խատի միջոցներ գտնել ցուցահանդէսը գլուխ բե-րելու գործում:

Այս օրերս մենք առիթ ունեցանք տեսնելու նոր կառուցվող թիֆլիսի թատրոնը: Թատրոնի պատերը արդէն բարձրացած են, կտուրը ծածկ-ված է, այժմ միայն մնում է սուպեր, կարգի բերել, ներկել և այլն: Ինչպէս լուսւմ ենք արդէն կառավարութիւնը նշանակել է 300 հազար ռուբլի այդ բոլոր գլուխ բերելու համար և զալ տարի սեպտեմբերին յոյս կայ վերջապէս թատրո-նը բացած տեսնել: Շինութիւնը շատ հիմնաւոր է, գրեթէ փայտ չէ բանեցրած, ամեն տեղ քար և երկաթ է: Մտնում են մի ահալին նախագաւիթ, որ տանում է դէպի դահլիճ և օթեկանները: Կը լինեն երեք յարկ օթեկաններ և չորրորդ յարկ՝ բացօթ: Օթեկանները ինչպէս Բայրթի թատրոնում կը լինեն միայն բեմի հանդէսը, իսկ կողքից կը լինեն միայն չորս օթեկաններ՝ թագաւորական և զինվե-ցիայի համար: Ամբողջ թատրոնը իր մէջ էլ տե-ղաւորի 1040 մարդ: Բեմը ահալին տեղ է ըրու-նում և նա բաժանվում է դահլիճից 13 սաժէն ունեցող կամարով: Ամեն յարկում կան ֆոյններ: Ամենալիւրիս յարկում կայ ահալին դահլիճ՝ զեկո-րացիաներ նկարելու համար: Մի բան որ աչքի է ընկնում, այդ դուրս գնալու անցքերի պակա-տութիւնն է: Լաւ կը լինէր հիմնականից դաւ առաջն առնելու:

Երկուշաբթի, սեպտեմբերի 28-ին, թիֆլիսի թատրոնում կայացաւ այս սեզոնում առաջին անգամ թիֆլիսցիներին վերջին ժամանակներում սիրած «Կարմեն» օպերայի ներկայացումը: Օպե-րայի կատարումը բուռն համակրութեան ցուցեր բարձրացրեց հասարակութեան կողմից: Այժման

ամեն մարդ կը կարողանայ հաւասար կերպով տեսնել իր ուղածը, երկրորդ՝ չը թողու հանդի-սին տխուր աղեղնութիւն գործել հիւրերի վրա, մինչդեռ տխուր աղեղնութիւնից միշտ առաջ են գալիս տխուր քննադատութիւններ, որոնց դէմ նախապէս դիմադրել հարկաւոր է ամեն կերպով: Այս կողմով էլ Մանչեստրի հանդէսն առաջին տեղն է բռնում վերջին հարկաւորութեամբ բաց-ված բոլոր հանդէսների ցուցակագրում: Ուստի դարմանալի է մի մինչև այսօր մօտ երեք միլիոն մարդիկ մտած են այդտեղ, չը նայելով որ հասա-րակութեան մեծ մասը այժմ հանդիստ է առնում կղզիներում և ամառանոցներում:

Աշխարհահանդէսի մուտքն է մօտ 33 կօպէկ, իսկ մշտական տոմսակ ունեցողին համար աւելի ար-ժան: Այցելութեան համար օրվայ ամենից յար-մար ժամանակն է առաւօտը, իսկ ընդհանուր ուրախութեանը մասնակցելու համար երեկոն, երբ բուսաբանական պարտիզի ծառերը վառվում են միլիոնաւոր կանթեղների և զեկուցիկ շա-տրուանը՝ սկսում է իր էլեբարական դարմանալի ներկայացումը, մինչ օրվայ ծանր աշխատութիւ-նից ազատված գործաւորը, խմբադիւր, բմիչը, գրպանահատը և պատաւոր քաղաքացին իրանց ուրախ և դուրսից գէմբերով թուում են լինել օ-լիմպիական մի առտուածուն: հարտանկութեան Գլխավորական երեկոյան այս խառնակութեան ժամանակ է որ տեղացի և օտարացի թղթակից-ների թափառաչքիկ ընդունւ սկսում է իր գաղ-տնի որը և արձակուրդի պարտադրութեամբ ար-լած ուսանողները սկսում են իրանց բաժանուր-կան կատակները:

Առ այժմ ընթերցողից խնդրում ենք բաւական համարել այսպիսի: Ուրեմն Good Bye!

Մանչեստր, 29 օգոստոսի

Մ/ը. Ա/ւ.

